ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի կառավարման խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 6-ին կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր- Հայաստան» հիմնադրամի կառավարման խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը

Մասնակցում էին.

Անդրանիկ Մարգարյան	Հայաստանի Հանրապետության վարչապետ, խորհրդի նախագահ
Վահրամ Ներսիսյանց	Հայաստանի Հանրապետության Նախագահի գլխավոր տնտեսական խորհրդական
Հովիկ Աբրահամյան	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար
Անդրանիկ Մանուկյան	Հայաստանի Հանրապետության տրանսպորտի եւ կապի նախարար
Վարդան Խաչատրյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյան	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար
Տոնական Ղազարյան	Շենիկ ՁՕԸ
Նազելի Վարդանյան	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Վանիկ Սողոմոնյան	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ
Վարդան Համբարձումյան	Գյուղատնտեսական Ասոցիացիաների ֆեդերացիա իրավաբանական անձանց միություն
Կարեն Նազարյան	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան հիմնադրամի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյան	«Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի գլխավոր գործադիր տնօրեն
Ալեքսանդր Բախտամյան	«Հազարամյակի մարտահրավեր - Հայաստան» հիմնադրամի գնումների ղեկավար, Կառավարման խորհրդի ժամանակավոր քարտուղար
Էնթոնի Գոդֆրի	Հայաստանում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար
Ալեքս Ռասին	Կառավարման խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի ներկայացուցիչ

Սիմոն Ղոնախչյան ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էր հետևյալ հարցը՝

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի 16 չափանիշների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կատարողականի ներկայացումը 2007 տարվա համար:

Որոշվեց՝ *ի գիտություն ընդունել Հայաստանում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Էնթոնի Գոդֆրիի կողմից ներկայացված Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամի 16 չափանիշների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կատարողականը 2007 տարվա համար (կցվում է):*

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
(ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ) ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՀՄՀ – ՀԱՅԱՍՏԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԲԱԽՏԱՄՅԱՆ

ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար
Էնթոնի Գոդֆրիի ելույթը

6 հոկտեմբերի, 2006թ.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ. ցուցանիշների ներկայացում

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամը համընդհանուր զարգացման խթանմանը միտված ամերիկյան կառավարության գործունեության բաղադրիչներից մեկն է: Հազարամյակի մարտահրավերների կորպորացիան (ՀՄԿ) հուսալի քաղաքական ուղի որդեգրած երկրներին տրամադրում է դրամաշնորհներ այնպիսի ծրագրերի ֆինանսավորման համար, որոնք ուղղված են աղքատության կրճատմանն ու կայուն տնտեսական աճի խթանմանը:

Ծրագիրը ձևավորելիս հաշվի են առնվել վերջին մի քանի տասնամյակում իրականացվող զարգացման ծրագրերից քաղած դասերը:

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամը առաջնորդվում է այն սկզբունքով, որ աջակցությունը կարող է առավել արդյունավետ կերպով կիրառվել այն երկրներում, որոնք արդեն հուսալի քաղաքական ուղի են որդեգրել՝ ձևավորելով նախադրյալներ տնտեսական աճի ու աղքատության կրճատման համար:

(Երկրների ընտրության գործընթացը)

Ծրագրին մասնակցելու երկրի իրավասությունը որոշելու համար ՀՄԿ Խորհուրդը դիտարկում է տվյալ երկրի կատարողական գործունեությունը 16 ցուցանիշների և արդարացի կառավարման, մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու ու տնտեսական ազատությունը խթանելու սկզբունքներին հետամուտ լինելու մասով: Խորհուրդը նաև դիտարկում է երկու ցուցանիշ, որոնք առնչվում են բնական ռեսուրսների տնօրինմանը: ՀՄԿ Խորհուրդը նաև գնահատում է աղքատությունը կրճատելու ու տնտեսական աճ ապահովելու ներուժն ու հնարավորությունը, ինչպես նաև հաշվի է առնում ֆինանսական ռեսուրսների առկայության հարցը:

2007 ֆինանսական տարվա համար դիտարկվում են 99 թեկնածու երկրներ, որոնք բաժանված են երկու խմբի. 69 երկիր՝ որպես ցածր եկամուտներով երկրներ և 30 երկիր՝ որպես ցածր ու միջին եկամուտներով երկիր:

2006 ֆինանսական տարվա ընթացքում «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամից ֆինանսական աջակցություն ստանալու համար առաջարկներ ներկայացնելու իրավասություն ձեռք էին բերել 23 երկրներ (չնայած մեկի՝ Գամբիայի, իրավասությունը կասեցվել է):

Եվս 18 երկրներ, Խորհրդի հրավերով իրավունք էին ստացել մասնակցել Շեմային ծրագրին (երկրներից մեկի՝ Եմենի իրավասությունը կասեցվել է), որը նպատակ ունի աջակցել քաղաքականությանը միտված բարեփոխումներին այն երկրներում, որոնք մոտ են դիտարկվող ցուցանիշները բավարարելուն ու ցուցադրել են իրենց հավատարմությունը «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամի քաղաքականության չափանիշների նկատմամբ:

Առայժմ ՀՄԿ-ը ստորագրել է ինը համաձայնագիր ծրագրին մասնակցելու իրավասություն ունեցող հետևյալ երկրների հետ. Հայաստան, Բենին, Քեյփ Վերդ, Վրաստան, Գանա, Հոնդուրաս, Մադագասկար, Նիկարագուա և Վանուատու՝ շուրջ 2.1 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր գումարային արժեքով: Նաև հաստատվել են ինը շեմային ծրագրեր Բուրկինա Ֆասոյի, Մալավիի, Ալբանիայի, Պարագվայի, Զամբիայի, Տանզանիայի, Ուկրաինայի ու Ֆիլիպինների հետ:

ՀՄԿ Խորհրդի 4-րդ ամենամյա ընտրական նիստը կայանալու է նոյեմբերի 8-ին: Ձեր երկիրը 2007 ֆինանսական տարվա համար թեկնածու երկիր է համարվում, ինչը նշանակում է, որ երկիրը բավարարում է մեկ շնչին ընկնող եկամուտների մասով ՀՄԿ պահանջները՝ սահմանված Համաշխարհային բանկի կողմից, ու համարվում է ամերիկյան արտաքին աջակցություն ստանալու իրավասություն ունեցող երկիր: Բոլոր թեկնածու երկրների, այդ թվում՝ Ձեր երկրի կատարողական ցուցանիշները կներկայացվեն ՀՄԿ ինտերնետային կայքում:

Որոշում կայացնելիս ՀՄԿ խորհուրդը կընտրի այն երկրներին, որոնք երեք կատեգորիաներից յուրաքանչյուրում դիտարկվող ցուցանիշներից առնվազն կեսի ու կոռուպցիայի վերահսկման ցուցանիշի մասով ունեն միջինից բարձր ցուցանիշներ: Խորհուրդը կարող է դիտարկել հավելյալ տվյալներ՝ միտումները կամ տվյալներում տեղ գտած բացերը լրացնելու համար:

Մեկ ցուցանիշի մասով միջինից նշանակալի ցածր արդյունք ունեցող երկիրը, որը համապատասխան միջոցներ չի ձեռնարկում իրավիճակը շտկելու համար, Խորհրդի կողմից կարող է համարվել ծրագրին մասնակցելու համար ոչ իրավասու երկիր: Ի վերջո, Խորհուրդը դիտարկում է այնպիսի հավելյալ տվյալներ, ինչպիսիք են կոռուպցիան, բնական ռեսուրսների կառավարումը և վերաբերմունքը հաշմանդամների նկատմամբ:

Ընտրության ցուցանիշների մասով մասնակցության իրավասություն ունեցող երկրների կատարողականը պարբերաբար վերանայվում է, ու ՀՄԿ-ն պահանջում է մասնակցության իրավասություն ունեցող երկրներից ու շեմային երկրներից պահպանել ու բարելավել կատարողականը՝ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամից աջակցություն ստանալու իրավասությունը պահպանելու համար:

Կասեցման ու դադարեցման մասին ՀՄԿ կարգի համաձայն ցուցանիշների պահպանումն ու բարելավումն անհրաժեշտ նախապայման է աջակցության ստացման համար: Երկրի մասնակցության իրավասությունը վերանայվում է տարեկան կտրվածքով: Նոյեմբերին կայանալիք Խորհրդի նիստի ժամանակ ՀՄԿ Խորհուրդը կդիտարկի Ձեր երկրի կատարողականն ըստ չափանիշների ու որոշում կկայացնի ծրագրին մասնակցելու երկրի հետագա իրավասության վերաբերյալ:

Նիստի նախապատրաստական նպատակով մենք կատարել ենք Ձեր երկրի նախնական ցուցանիշների գնահատում:

Հայաստանի միավորը «Քաղաքական իրավունքների» մասով այս տարի շարունակել է անկում ապրել ու 2007 ֆինանսական տարվա համար դարձել է 13, մինչդեռ երկու տարի առաջ այն հասնում էր 20-ի: Նկատելի է նաև անկում «Քաղաքացիական ազատությունների» մասով, որի միավորը 32-ից իջել է 28-ի ու մենք շարունակում ենք մտահոգված լինել կառավարության կողմից մամուլի ազատության սահմանափակումներով:

ՀՄԿ-ն այս անկումները շատ լրջորեն է ընդունում: Ինչպես գիտեք դեկտեմբերին ու հունվարին ՀՄԿ-ի կողմից եղան զգուշացումներ, որոնք արտացոլում էին մեր ակնկալիքներն այն քայլերի մասով, որոնք ձեռնարկվելու էին կառավարության կողմից: Ցուցանիշների դիտարկումից զատ, մենք նաև հաշվի ենք առնում ՀՄԿ առաջ քաղաքականության վերաբերյալ ստանձնած պարտավորությունների մասով առաջընթացը:

Ձեր կառավարությունը պարտավորվել է շարունակել ժողովրդավարական բարեփոխումները, այդ թվում հանրաքվեից բխող բարեփոխումները, ու համագործակցել ԱՄՆ կառավարության հովանու ներքո ժողովրդավարության խթանման ասպարեզում աշխատող կազմակերպությունների հետ՝ բարելավելու 2007թ. նախատեսվող ընտրությունների անցկացումը:

Չնայած այս ոլորտներում որոշ առաջընթաց եղել է, մենք այնուամենայնիվ ակնկալում ենք ավելի սերտ ու համագործակցային ներգրավվածություն: Մենք խորհուրդ ենք տալիս, որ դուք առավել սերտորեն աշխատեք մեր ու այլ միջազգային և տեղական կազմակերպություններ հետ, որոնք ձգտում են առաջընթաց ապահովել ազատ ու արդարացի ընտրությունների ճանապարհին:

Խորհուրդը ցանկանում է դրական տեղաշարժեր տեսնել այս ասպարեզներում:

Խորհրդի նիստից հետո ՀՄԿ ներկայացուցիչները Ձեր կառավարությանը հետ կքննարկեն Խորհրդի որոշումը ծրագրին Ձեր երկրի հետագա մասնակցության իրավասության վերաբերյալ:

Խորհրդի որոշումից հետո ՀՄԿ ներկայացուցիչները Պետքարտուղարության հետ համատեղ կպատրաստեն մանրամասն վերլուծություն՝ վերհանելով ցուցանիշների անկման հավանական պատճառներն ու ներկայացնելով բարեփոխումների հնարավորությունները: Մենք ուրախ կլինեք Ձեզնից ստանալ տեղեկություններ կատարողականի շտկման ուղղությամբ ձեռնարկվող բարեփոխումների կամ մշակվող պլանների մասին, որպեսզի կարողանանք համաձայնության քայլ իրավիճակի շտկմանն ուղղված քայլերի շուրջ: